«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա *՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում*

Հաստատություն *՝ Կապանի թիվ 4 ՆՈՒՀ*

Դաստիարակ *՝ Ավագյան Զարվարդ*

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……...…3

Գլուխ 1 …….5

Գլուխ 2 ……11

Եզրակացություն …… . 16

Օգտագործված գրականության ցանկ……17

Ներածություն

Աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք պահանջում են նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողություններ, նոր հմտություններ: Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ է ստեղծագործական կարողություններով օժտված, համակողմանի զարգացած, մշտապես ինքնազարգացման ձգտող անձնավորություն՝ ունակ հեշտությամբ կողմնորոշվելու անընդհատ փոփոխվող իրականության մեջ և պատրաստ արագորեն յուրացնել գործունեության նորանոր տեսակներ և ոլորտներ: Այս նպատակը իրականացվում է կրթական համակարգում՝ մանկապարտեզներ, դպրոցներ, քոլեջներ, ուսումնարաններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն: Կազմակերպված ուսուցումը սկսվում է նախադպրոցական տարիքից, որը պարունակում է տարբեր հիմնախնդիրներ:

Կրթական փոփոխությունների զարգացման ուղղություններն ու մոտեցումները պահանջում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Ուսուցման նոր մեթոդներից է ինտեգրված պարապմունքը: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը: Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Ինտեգրված զբաղվածության հայեցակարգը ներառում է որոշակի թեմաների էությունը բացահայտելու ընդունակություններ՝ կիրառելով այն մի քանի գործողություններով, որոնք փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Նախադպրոցական համակարգում ինտեգրված աշխատանքի տեխնոլոգիան թույլ է տալիս կատարել նախապես նախադպրոցական կրթության հիմնական խնդիրը՝ թեման լիովին և խորը բացել, բայց միևնույն ժամանակ հնարավորինս կարճ ժամկետով զբաղվել: Սա թույլ չի տալիս ծանրաբեռնել երեխաներին և ավելի շատ ժամանակ թողնել այլ գործողությունների, ինչպիսիք են զբոսանքը, բացօթյա խաղերը և այլն: Այս ամենը նաև դրական ազդեցություն են ունենում ուսման շարժառիթների վրա:

Ինտեգրված հիմնական *խնդիրներն են*՝

- Երեխայի համակողմանի դաստիարակությունը, կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը
- Տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ինտեգրելը

Հետազոտության նպատակն է.

- Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ, ինտեգրված պարապմունք կազմակերպելով, սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը, զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու սովորույթը:
- Առաջացնել հետաքրքրություն ինտեգրված պարապմունքների նկատմամբ, որը տալիս է երեխային լայն պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին:

ԳԼՈՒԽ 1

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

<<Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում: Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորվում է որպես հեքիաթ, որի ստեղծողները երեխաներն են: Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի՝ մյուս առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ ներ բան, բայց կատարեք այնպես, որ կյանքի այդ պատառիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույներով>>:

Վ. Սուխոմլինսկի

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս նպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ինտեգրված պարապմունքների միջոցով ուսումնառություն իրականացնելը: Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը: Եվ այդ զագացման ամենատարածված միջոցներից հատուկ կազմակերպված ուսուցման գործընթացը՝ ինտեգրված պարապմունք իրականացնելն է:

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհրաժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր

աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում:

Օրվա կանոնակարգը փոփոխվում է տարվա ցուրտ ու տաք եղանակներին համապատասխան: Նկատի առնելով օրվա ռեժիմի վերը նշված տարբերակները՝ յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ՝ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն: Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-12 կամ 10-15 րոպեանոց ընդմիջումներ/դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար:

Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ անհրաժեշտ է սերմանել և մշակել այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը, զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու սովորույթը: Բոլոր երեխաներն այս կամ այն չափով օժտված են այս հատկանիշներով, բայց հաճախ կյանքի առաջին տասնամյակում կորցնում են դրանք: Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում հատկապես սովորելու գործընթացում:

Ինտեգրված պարապմունքների ընթացքում կարևորվում են այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված ուսուցումն ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողակ երեխաները մեծանում են հոգատար, աջակցող միջավայրում: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն ներշնչում նոր ձեռք բերվող գիտելիքները կիրառելու համար: Դա է պատճառը, որ մեր մանկապարտեզում շատ է կարևորվում ինտեգրված պարապմունքների անցկացումը: Նպատակահարմար է երեխային ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի հետ՝ մյուս առարկաներին կապելով: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի

դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների և ժամանակակից մոտեցումների կիրառություն: Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն ուսուցման տարբեր փուլերում: Դրանք երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Սա հաստատում է երեխաների հետ գործնական աշխատանքի արդյունավետությունը՝ պարապմունքի տվյալ ձևի կիրառմամբ:

Երեխաների հետ ինտեգրված պարապմունքներն իրականացվում են խաղային գործունեության միջոցով: Խաղը նախադպրոցականի հիմնական կենսաձևն է, որը միշտ մնում է սիրված զբաղմունք: Խաղի դերը մեծ է երեխայի դաստիարակության և ուսուցման ընդհանուր զարգացման գործում: Ուսումնական գործընթացում խաղն ու պարապմունքը պետք է հանդես գան միաժամանակ՝ լրացնելով միմյանց: Այսօր առավել արդյունավետ է նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդը: Կարևոր է նաև ընտրել այնպիսի ժամանակակից խաղեր, որոնք ունենան վարման հետաքրքիր մեթոդներ : Ըստ Մ. Մոնտեսորի <<Այն խաղը, որն ուսուցանող չէ՝ դատարկ խաղ է>>: Երբ երեխան ուսուցանվող նյութը լրացնում է խաղի միջոցով, այդ դեպքում ապահովվում է բարձր տրամադրությունը, հուզական դրական մթնոլորտը և ակտիվությունը, իսկ դրանք այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի լիարժեք զարգացման համար: Հենց այդ պատճառով մեր մանկապարտեզում, յուրաքանչյուր դաստիարակի կողմից, կարևորվում է ինտեգրված պարապմունքների անցկացումը՝ տարբեր խաղերի համադրությամբ:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են ընձեռնում.

- Մեկ պարապմունքի միջոցով տալ երեխային այն գիտելիքներն ու կարողություններ, որոնք տրվում են առանձին պարապմունքների ընթացքում:
- Հետաքրքիր հնարների միջոցով երեխայի ուշադրությունը և հետաքրքրությունը ուղղել դեպի ուսումնասիրվող թեման:
- Ինտեգրված պարապմունքի թեման վերաբերում է կյանքին և դրա շնորհիվ երեխան առարկայական գիտելիքների ու կարողությունների հետ մեկտեղ ձեռք է բերում նաև գործնական հմտություններ ու գիտելիքներ:
- Պարապմունքը կենտրոնացված չէ միայն մեկ ոլորտի վրա, հետևաբար մեկ պարապմունքի ընթացքում երեխան ստանում է բազմակողմանի գիտելիքներ:

Պարապմունքի թեման ընտրելիս դաստիարակը պետք է հաշվի առնի դրա կարևորությունը ու հագեցվածությունը, ինչպես նաև, երեխաների տարիքային առանձնահատկություններից ելնելով, համապատասխանությունը կրթական ծրագրին:

Ինտեգրված պարապմունքները պահանջում են ինքնուրույն մտածողություն, հնարամտություն և շրջապատն ընկալելու հմտություն: Դրանք հնարավորություն են տալիս, որ երեխան հետաքրքրություն ցուցաբերի ուսման նկատմամբ և իրեն զգա հոգատար միջավայրում: Այսպիսի մթնոլորտում դաստիարակն ավելի հեշտությամբ է կարողանում արգացնել երեխաների մտավոր, լեզվական ունակությունները, միջանձնային հարաբերությունները՝ ապահովելով միջանձնային կապերը: Թեմատիկ ինտեգրված պարապմունքն իրենից ներկայացնում է պարապմունքի առավել ակտիվ ձև, որի ընթացքում երեխան ձեռք է բերում

- Հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ
- Թիմում աշխատելու կարողություն
- Սեփական կարծիքն արտահայտելու, դիմացինին լսելու կարողություն
- Ինքնուրույնություն
- Բարդ իրավիճակներում կողմնորոշվելու հմություն
- Խոսքը ճիշտ ձևակերպելու հատկություն
- Համաձայնեցված գործողություններ՝ խաղալու, խոսելու, քննարկելու, կատարելու հմտություն:

Ինտեգրված պարապմունքների ժամանակ մեկ թեմայի շուրջ տարվող քննարկումները, զրույցները, խաղերն ու վարժությունները երեխային օգնում են լինել ակտիվ, զգոն, ուշադիր: Այսպիսով՝ ինտեգրված պարապմունքները դաստիարակին հնարավորություն են տալիս երեխայի մեջ դաստիարակել որակներ, որոնք անհրաժեշտ են հասուն տարիքում: Այն կատարվում է մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ մայրենի-լեզու-կերպարվեստ, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կառուցողական աշխատանք, մաթեմատիկա-ապլիկացիա, խոսքի զարգացում-ապլիկացիա և այլն: Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք: Պարապմունքները երեխաների համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները: Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով: Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատուկություններից, ծնողների պահանջներից:

Կախված պարապմունքի բնույթից՝ դրանց բովանդակության մեջ թույլատրելի միացումն ինքնին պիտի բխի երեխաների տարիքային տարբերություններից: Լավագույն տարբերակը ենթախմբերով աշխատանքն է: Դաստիարակը պարապմունքը սկսում է ամբողջ խմբի հետ: Խթանման փուլից հետո խումբը բաժանում է տարիքային ենթախմբերի և միևնույն թեմայի շրջանակներում յուրաքանչյուր խմբին հանձնարարում է իրենց տարիքային առանձնահատկություններին համապատասխան առաջադրանք: Փոքրիկները պարապմունքն ավարտում են մի փոքր շուտ: 3-4 տարեկան երեխաների

պարապմունքը կարող է տևել 15-20 րոպե, 4-5 տարեկան երեխաներինը՝ 20-25 րոպե և 5-6 տարեկաններինը՝ 25-30 րոպե: Պարապմունքների ընթացքում անցկացվում է թարմացնող վարժություն կամ աշխուժացնող խաղ՝ 2-3 րոպե տևողությամբ: Պարապմունքների միջև կազմակերպվում է ընդմիջում՝ 10-12 /կամ մինչև 15/ րոպե տևողությամբ: Ընդմիջումների ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել աշխուժացնող թարմացնող կարճատև խաղեր, խուսափելով չափազանց ակտիվություն առաջացնող և երկարատև խաղերից: Պարապմունքների ընթացքում երեխաների ակտիվ շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը:

Գլուխ 2

Գործնական աշխատանք

Ինտեգրված թեմայով պարապմունք՝ <<Աշուն>> թեմայով

Նպատակը՝

- **Ամրապնդել** երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, կենդանիների, բույսերի, բնության մեջ մարդու աշխատանքի վերաբերյալ:
- **Զևավորել** ընդհանուր պատկերացում աշնան մասին, ընդլայնել պատկերացումները աշնան բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ, ձևավորել մտքերն ինքնուրույն արտահայտելու, հարկ եղած դեպքում ձեռք բերած գիտելիքներն օգտագործելու կարողություն:
- **Սերմանել** սեր հայրենիքի հանդեպ, երեխաներին հաղորդակից դարձնել հարենի բնությանը, ազգային մշակույթին, սովորեցնել պահպանել բնությունը:

Հարստացնել բառապաշարը՝ տերևաթափ, ոսկե, գույնզգույն, նախշուն, ամպամած, դեղնահեր, բերքառատ, անձրևոտ, ոսկեհեր բառերով:

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր տերևներ, մրգեր և բանջարեղեն, աշնան վերաբերյալ նկարներ:

Պարապմունքի ընթացքը՝ Նպատակահարմար է զրույցը սկսել աշնան մասին հանելուկով, որը հետևյալն է.

<<Այդ երբ է լինում,
Օրն է կարճանում,
Ծառն է մերկանում,
Անձրև է մաղում,
_Այդ երբ է լինում>>:
/Աշնանը/

Երեխաների պատասխանը լսելուց հետո կարելի է առաջարկել նկարագրել օրվա եղանակը տվյալ պահին և բնությա օրացույցում կատարել համապատասխան նշումներ:

Դաստիարակի և երեխաների զրույցի մոտավոր բովանդակությունը հետևյալն է.

Դաստիարակ- Երեխանե՛ր, ասեք թե տարվա որ եղանան է:

Երեխաներ- Աշուն է:

Դաստիարակ- Երեխանե'ր, այժմ եկեք պատմենք, թե ինչ գիտենք աշուն եղանակի մասին: Ապա ասեք, թե որոնք են աշնան ամիսները:

Երեխաներ- Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր:

Դաստիարակ- Ի՞նչ տոներ ենք նշում աշնանը:

Երեխաները դաստիարակի օգնությամբ ասում են գիտելիքի օրվա, Անկախության տոնի, Ուսուցչի տոնի մասին:

Դաստիարակը պատմում է աշնան ընթացքում կենդանիների և թռչունների կյանքում տեղի ունեցած փոփոխությունների մասին, այն, որ կենդանիները պաշար են հավաքում, հաստ մորթի են հագնում, թռչունները չվում են տաք երկրներ՝ ծիծեռնակը, արագիլը, կռունկները, սարյակները: Մեզ մոտ մնում են կաչաղակները, ճնճղուկները, ագռավները:

Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է դեպի պատուհանը, որտեղից երևում է բակը, ծառերը, որոնք տերևաթափվել են, դեպի գույնզգույն տերևները, որոնք պարուհիների նման թռչում են քամուց: Աշունն ամենաեռանդուն աշխատանքների ժամանակն է: Մարդիկ շտապում են հավաքել բերքը, պահածոներ են պատրաստում: Բերքահավաքի ժամանակ բոլորն ուրախ են և օգնում են միմյանց: Աշնանը մարդիկ սկսում են տաք հագուստներ հագնել՝ վերարկուներ, տաք կոշիկներ: Երեխաները սովորում են նաև հետևյալ ասացվածքները.՝ <<Ամռանը աշնան մեկ օրը տարի է կերակրում>>, <<Ով աշխատի, նա՝ կուտի>:

Այնուհետև երեխաները ծանոթանում են դաստիարակի կողմից պատրաստված անկյունին, որտեղ դիդակտիկ նյութեր են՝ աշնան վերաբերյալ նկարներ, աշնանային ծառ, զամբյուղով մրգեր և բանջարեղեն:

Այսքանից հետո, տրված նյութի յուրացումը ստուգելու համար դաստիարակը երեխաներին բաժանում է երկու խմբի: Խմբերից մեկը ապլիկացիայի միջոցով, իսկ մյուսը խումբը ծեփի միջոցով պետք է պատրաստեն աշնանային ծառ: Առաջին խումբը ապլիկացիայի տարրերով ծառի վրա սոսնձում է աշնանային տերևներ:

Երկրորդ խումբը ծեփում է գունավոր տերևներ՝ ստանալով աշնանային ծառ:

Աշխատելու ընթացքում խմբասենյակում հնչում էր երաժշտություն՝ Վիվալդիի <<Տարվա եղանակները>>ստեղծագործությունը:

Պարապմունքի ամփոփում.

Պարապմունքի արդյունավետությունը և արդյունքը ստուգելու համար տրվում են հարցեր, որոնք են.

1. Ինչի՞ մասին էր զրույցը:
2. Ի՞նչ նորություն իմացանք:
3. Ի՞նչ գեղեցիկ բառեր գործածենք աշունը գովերգելու համար:
4. Ի՞նչ փոփոխություններ են լինում աշնանը:
5. Ինչու՞ եմ սիրում աշունը:

Հարցերի պատասխանները քննարկելուց հետո դաստիարակը երեխաներին հրավիրում է մոտենալ դեպի աշնանային անկյունը, մոտիկից ուսումնասիրել այնտեղ դրված պարագաները, տալ իրենց հետաքրքրող հարցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իմ համոզմամբ, ինտեգրված ամփոփիչ պարապմունքներն իրեն առանձնահատուկ նշանակությունն ունեն կրթական գործընթացում: Դրանք տարբերվում են են սովորական պարապմունքներից այն առումով, որ այստեղ ամբողջացվում, ամփոփվում և ամրակայվում են անցած նյութի բովանդակությունը վերարտադրելու երեխաների կարողությունները:

Հետազոտության արդյունքում նաև համոզվեցի, որ ինտեգրված պարապմունքները նպաստում են երեխաների միջև խաղային և խոսքային փոխհարաբերությունների կայացմանը, ինչպես նաև հիշողության իմացական և հուզական ոլորտների զարգացմանը: Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի ներդաշնակ զարգացումը և ապահովում ուրախ, աշխույժ մթնոլորտ: Նման մթնոլորտը երեխաներին վստահություն է ներշնչում արդեն իսկ ձեռք բերած գիտելիքները հմտորեն կիրառելու համար: Դա է պատճառը, որ իմ պարապմունքներում կարևորվում և առաջնային տեղում է գտնվում ինտեգրված պարապմունքների հաճախակի անցկացումը:

Ուսումնասիրելով տվյալ թեմայի առավելությունները առաջարկում եմ այս մեթոդի էլ ավելի հաճախ կիրառությունը, հատկապես միջին և ավագ խմբերի երեխաների հետ:

Գրականության ցանկ

1. <<Ինտեգրված կրթություն>>՝ Վիքիպեդիա

2. Մեթոդական ուղեցույց մանկապարտեզի դաստիարակների մասին 2010թ. , Հեղինակներ՝ Հ. Միտոյան, Լ. Սմբատյան

3. <<Նախաշավիղ>>՝ գլխավոր խմբագիր Կարինե Թորոսյան, համակարգող՝ Լալա Սմբատյան

4.<< Մանկապարտեզի կրտսեր երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիր>>: